

## ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՉՈՒՄ

### ԵՐԵՄ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Դագարամյակների ընթացքում մարդկության կուտակած փորձը, գիտական նվաճումները, մշակութային արժեքները, պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարելի է արտահայտել մեկ քառով՝ քաղաքակրթություն:

Ի՞նչ է քաղաքակրթությունը, որո՞նք են նրա զարգացման բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, ինչպիսի՞ դեր է նրան հատկացված պատմության շրջապատույտում:

«Քաղաքակրթություն» (լատ. *civilis* - քաղաքացիական, պետական) ասելով հասկանում ենք ընդհանուր գաղափարների ու նպատակների շուրջ պատմական զարգացման ընթացքում ձևավորված մարդկանց ընդհանրություն, որոնք իրենց կենսագործունեության միջավայրում ստեղծում են հոգնոր և նյութական միասնական մշակույթ<sup>1</sup>: Առաջին անգամ այդ կատեգորիան ձևակերպվել է XIX դարի ֆրանսիացի ու անգլիացի հետազոտողների կողմից (**Ֆ. Գիգո**, Եվրոպայում քաղաքակրթությունների պատմություն (1828), Ֆրանսիայում քաղաքակրթությունների պատմություն (1830), Ո. Բուկլի՝ «Անգլիայում քաղաքակրթության պատմություն (1857-1861)»)<sup>2</sup>:

Ա. Նիշիֆորոյի բնորոշմամբ՝ «քաղաքակրթությունը մարդկանց որոշակի խնբերի կեցության և գործունեության մի ամբողջություն է, որը դրսենորվում է՝ 1) նյութական, 2) ինտելեկտուալ, 3) քարոյական, 4) դիտարկվող խնբերի քաղաքական և սոցիալական կազմակերպվածության ձևով», իսկ Մ. Կրուգեի կարծիքով՝ «յուրաքանչյուր քաղաքակրթություն որոշվում է քաղաքական ինստիտուտների ու գաղափարների ամբողջությամբ, նյութական ու մշակութային կյանքի պայմաններով, արտադրողական ուժերով, հասարակական հարաբերություններով, կրոնական, ինտելեկտուալ և գեղարվեստական գործունեության բոլոր դրսենորումներով»<sup>3</sup>:

Լոկալ քաղաքակրթությունները արտացոլում են առանձին երկրի, երկրների խմբի, էթնոսների պատմամշակութային, էթնիկ, կրոնական, աշխարհագրական-տնտեսական առանձնահատկությունները, որոնք միմյանց հետ կապված են ընդհանուր ճակատագրով, ընդհանուր պատմական առաջընթացի ռիթմով<sup>4</sup>: Ժամանակակից լոկալ քաղաքակրթություն-

<sup>1</sup>Տե՛ս **Явчуновская Р. А.** Глобальная и региональная безопасность. М., 2009, էջ 43:

<sup>2</sup>Տե՛ս **Мухаев Р. Т.** Геополитика. М., 2010, էջ 13:

<sup>3</sup>"Сравнительное изучение цивилизации". Хрестоматия. М., 1999, с. 13.

<sup>4</sup>Տե՛ս նույն տեղը, էջ 42:

Աերի շարքին են դասվում արևմտյան, իսլամական, ուղղափառ, կոնֆուցիական-բուդդայական, հնդկական, լատինաամերիկյան, ճապոնական, աֆրիկյան քաղաքակրթությունները։ Լոկալ քաղաքակրթությունների տեսության հիմնադիր Ն. Դանիլևսկին նշում է, որ այն «կրոնական, սոցիալական, կենցաղային, արդյունաբերական, գիտական, գեղարվեստական, մի խոսքով՝ պատմական զարգացման յուրահատուկ նախագիծ է»<sup>5</sup>։ Լոկալ քաղաքակրթությունների այս ցանկը վերջնական չէ։ Օրինակ, կոնֆուցիական-բուդդայական քաղաքակրթության մեջ կարելի է ընդգրկել ճապոնական և տիբեթական, արևմտյան քաղաքակրթությունում՝ արևմտա-քրիստոնեական, հյուսիս-ամերիկյան, ավստրալիական, իսլամականում՝ սունի, շիհիթական, Աֆրիկյայի մահմեդական, թուրքական և ինդոնեզիա-մալյազիական ենթաքաղաքակրթությունները։ Քաղաքակրթությունները որպես կանոն ընդգրկում են հսկայական տարածքներ ու մեծ բնակչություն (քացառություն են ճապոնական և հայկական քաղաքակրթությունները)։

Լոկալ քաղաքակրթությունների առավել հստակ բնորոշումը ենթադրում է, որ այն ժամանակի ու տարածության մեջ տարբեր մշակութային-պատմական տիպերի, առանձին աշխարհաքաղաքական, սոցիալական, հոգևոր կառուցյների ձևավորումն է։ Նրանք տարբերվում են միմյանցից ոչ միայն արտադրության կազմակերպման բնույթով, սոցիալ-տնտեսական կառուցվածքով, այլև մարդու ապրելակերպի, սովորույթների, մտածելակերպի, կրոնական գիտակցության տարբերությամբ։ Քաղաքակրթությունը նաև հասարակության որոշակի տիպ է, աշխարհայացք, որը ձևավորվում է աշխարհագրական, բնակլիմայական գործոնների ազդեցությամբ, պայմանավորված է պատմական զարգացման, կրոնական, մշակութային, հոգեբանական և մի շարք այլ գործոններով, որոնց հիմքում ընկած են հազարամյակների ընթացքում ձևավորված ավանդույթներն ու պատմական իներցիան։ Բնական է, որ քաղաքակրթությունները իրենց պոտենցիալը պետք է դրսնորեն պետությունների միջոցով, և մարդկության զարգացման պատմությունը առանձին լոկալ քաղաքակրթությունների հակամարտության, համագործակցության կամ փոխազդեցության պատմություն է։ Դրա մասին են վկայում հարյուրամյակներ տևած արևմտյան և ուղղափառ, արևմտյան և իսլամական քաղաքակրթությունների միջև ընթացող հակամարտությունն ու մրցակցությունը։

Ա. Թոյնբին առանձնացնում է գործուն հիմք քաղաքակրթություններ։

1) արևմտյան հասարակություն (համախմբված արևմտյան քրիստոնեությամբ),

2) ուղղափառ-քրիստոնեական կամ բյուզանդական հասարակություն (Ոուսաստան, Հարավ-արևելյան Եվրոպա),

3) իսլամական հասարակություն (Հյուսիսային Աֆրիկայից ու Մերձավոր Արևելքից մինչև Չինաստան),

4) հինդուիստական հասարակություն,

<sup>5</sup> **Данилевский Н. Я.** Россия и Европа. М., 1991, с. 91.

5) հեռավորարևելյան հասարակություն (Հարավ-Արևելյան Ասիա)<sup>6</sup>:

Ա. Թոյնբին քաղաքակրթական նույնականացման համար չափանիշ է համարում կրոնը, պատմությունը, լեզուն, սովորությունները և մշակույթը<sup>7</sup>:

Ս. Հանթինգտոնը առանձնացնում է ութ քաղաքակրթություն՝ արևմտյան, կոնֆուցիական, ճապոնական, խլանական, հինդուիստական, ուղղափառ-սլավոնական, լատինաամերիկյան և աֆրիկյան<sup>8</sup>:

Վերջին շրջանում բազմաթիվ մասնագետների ուշադրության կենտրոնում հայտնվել է աշխարհաքաղաքական հակամարտության այն բնագավառը, որն իր բնույթով քաղաքակրթական-մշակութային է և որոշ չափով փոխկապակցված է ֆորմացիոն (սոցիալ-տնտեսական) ձևի հետ: Դա նախ և առաջ արտացոլված է ամերիկյան հայտնի քաղաքագետ Ս. Հանթինգտոնի հրապարակումներում, որոնք լայն քննարկումների տեղիք տվեցին: Մեր ժամանակներում հնարավոր չետազոտել աշխարհաքաղաքական հակամարտությունները առանց հաշվի առնելու քաղաքակրթական գործոնը:

Ցանկացած լոկալ քաղաքակրթություն երկակի է դրսևորվում: Մի կողմից այն մոբիլիզացնում է ուժերը ինքնապաշտպանության, նյութական ու մշակութային արժեքների պահպանան և զարգացնան ուղղությամբ, իսկ մյուս կողմից քաղաքակրթություններին բնորոշ է ծավալման ու տարածման գործոնը, որը տարբեր ձևերով է դրսևորվում: Աշխարհաքաղաքական յուրաքանչյուր դարաշրջանի բնորոշ է եղել հակամարտությունները լուծելու որոշակի ձևերի գերակայությունը: Մինչև XX դարի կեսերը աշխարհաքաղաքական խնդիրները լուծելիս մեծ պետությունները հիմնականում օգտագործում էին ռազմական ուժը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների աճը, զանգվածային ոչնչացման գենքի և գլոբալացման գործոնները ժամանակակից միջազգային հարաբերություններում առաջ մղեցին նոր մոտեցումներ և վերանայվեցին վերահսկողության ավանդական ձևերը: Ներկայումս առավելապես կարևորվում է քաղաքակրթական, գաղափարական և մշակութային էքսպանսիան:

Որոշ հետազոտողներ (Ս. Հանթինգտոն, Ն. Մոհսեն) ենթադրում են, որ հաջորդ համաշխարհային պատերազմը կկրի միջազգաքակրթական բնույթ<sup>9</sup>: Սակայն բազմաթիվ ուսումնասիրողներ (այդ թվում և մենք) գտնում են, որ նույն պապական հակամարտությունները դեռևս կկրեն միջավետական բնույթը: Ինտեգրման գործընթացներն ընթանում են ոչ միայն քաղաքական, տնտեսական, այլև քաղաքակրթական բնագավառներում (ԵՄ, Արաբական երկրների լիգա, Աֆրիկյան միասնության կազմակերպություն, ԵԽ, ՄԵՐԿՈՍՈՒՐ, Անյան պակտ, Կենտրոնաամերիկյան

<sup>6</sup> Տե՛ս Տոյնբի Ա. Постижение истории. М., 1991, էջ 33:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 524:

<sup>8</sup> Տե՛ս Խանտինգտոն Ս. Столкновение цивилизаций // «Полис», 1994, № 1, էջ 35:

<sup>9</sup> Տե՛ս Խանտինգտոն Ս., նշվ. աշխ., Հայաստան, այլև քաղաքակրթական բնագավառներում (ԵՄ, Արաբական երկրների լիգա, Աֆրիկյան միասնության կազմակերպություն, ԵԽ, ՄԵՐԿՈՍՈՒՐ, Անյան պակտ, Կենտրոնաամերիկյան

ընդհանուր շուկա, ԱՄԵԱՆ, Տնտեսական համագործակցության կազմակերպություն (Թուրքիա, Իրան, Պակիստան)<sup>10</sup>:

Երկրներ աշխարհակարգին բնորոշ գաղափարական հակամարտության փոխարկվելը ազգային և քաղաքակրթական անհանդուրժողականության հատկապես վտանգավոր բնույթ է ստանում քաղաքակրթությունների բեկման կամ շփման հատվածներում (Չինաստանի հյուսիսարևմուտք, Հյուսիսային Կովկաս, Հյուսիսային Իռլանդիա, Կիպրոս, Զամուն և Քաշմիր, Ինդոնեզիա, Մալայզիա և այլն):

Ս. Հանթինգտոնի կարծիքով՝ Արևմուտքի հաղթանակը Արևելքի նկատմամբ քաղաքակրթական հաղթանակ չէ: Արևմտյան արժեքներ են համարվում ազատական ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, շուկայական հարաբերությունները, անհատապաշտությունը, իսկ արևելյան՝ կոլեկտիվիզմը, ավանդապահությունը, պատերնալիզմը: Պարզ է, որ տարբեր քաղաքակրթություններ չունեն միևնույն պոտենցիալը, և այսօր նրանց մի մասի կողմից իրականացվող էքսպանսիան ոչ այնքան տարածքային, որքան տնտեսական և հատկապես ռեսուրսների համար է մղվում: Մեկ շնչին ընկնող իր ՀՆԱ-ն կրկնապատկելու համար Միացյալ Նահանգներին հարկ է եղել 47 տարի, ճապոնիային՝ 33, Ինդոնեզիային՝ 17, Հարավային Կորեային՝ 10 տարի: XX դդ. 80-90-ական թվականներին ՉՃՀ-ի տնտեսական աճը տարեկան կազմել է 8 %, ասիական երկրների ՀՆԱ-ի տարեկան աճը՝ միջինը 6 %, իսկ Արևմուտքինը՝ 2.5-2.7 %: 2020 թ. համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 40%-ը կարտադրվի Ասիայում, աշխարհի 25 խոշորագույն քաղաքներից 16-ը ևս կգտնվեն Ասիայում: Նույն ժամանակահատվածում աշխարհի խոշորագույն տնտեսական 6 պետություններից 5-ը կլինեն ասիական: ԿՇՎ-ի տվյալներով մինչև 2020 թ. այդ ցուցակը կգլխավորեն Չինաստանը (20 տրլն դոլար), ԱՄՆ-ը (13.5 տրլն), ճապոնիան (5 տրլն), Հնդկաստանը (4.8 տրլն), Ինդոնեզիան (4.2 տրլն), Հարավային Կորեան (3.4 տրլն), Թայլանդը (2.4 տրլն)<sup>11</sup>: Այս կամ այն քաղաքակրթության հնարավոր վտանգները հաշվարկելու կամ հնարավոր էքսպանսիան կանխորոշելու համար պետք է նկատի ունենալ հետևյալ գործոնները. ա) ժողովրդագրական աճ, բ) տնտեսական աճ և էքսպանսիա, գ) ռազմական հզորության ու ռազմական ծախսերի աճ, դ) արտաքին բնագավառում ազդեցության ու վերահսկողության գոտիների ընդլայնում<sup>12</sup>: Ստորև բերված այուսակը արտացոլում է 1989-1998 թթ. քաղաքակրթությունների զարգացման դիմանմիկան<sup>13</sup>:

<sup>10</sup> Ст. «Международные отношения: теории, конфликты, движения, организации». М., 2008, № 141, 158, 160, 161, 162, 164:

<sup>11</sup> Ст. Уткин А. И. Американская стратегия для XXI века. М., 2000, № 168:

<sup>12</sup> Ст. Явчуновская Р. А., Եշվ. աշխ., № 45:

<sup>13</sup> Ст. Киселев С. Г. Основной инстинкт цивилизаций и геополитические вызовы России. М., 2002, № 316:

	Քաղաքակրթություն	Առաջնային տպագործություն	Բնակչությունը մլն մարդ			ՀՆԱ մլրդ \$			Ռազմական բյուջե մլրդ \$			Ռազմա- կան ուժեր մլն մարդ	
			1989	1998	աճ %	1989	1998	աճ %	1989	1998	աճ %	1995	1998
1	Արևմտյան	32.4	805	849	5.5	1103	1786	62	455	445.	-2	5.9	5.2
2	Ուղղափառ	2.7	330	189	-43	429	539	26	4.9	9.9	102	1.5	1.4
3	Իսլամական	28	932	1145	23	847	3804	449	44.1	60.9	38	4.9	5.2
4	Կոմֆուցիական բուդյայական	13.4	1458	1606	10	739	4933	568	47.2	37.3	-21	7.0	6.4
5	Դիմուլիստական	3.4	832	989	19	234	1563	568	9	10.2	13	1.3	1.3
6	Լատինա- ամերիկյան	21.7	436	491	12.5	797	3076	286	10.3	26.8	160	1.5	1.9
7	Ռուսական	17.1	289	146	-50	2500	692	-72	226	4.5	-98	1.7	1.2
8	ճապոնական	0.4	123	126	2	1843	2850	55	29.1	43.5	49	0.24	0.18
9	Աֆրիկական	4.1	106	139	31	40	152	379	0.6	0.8	33	0.19	0.18

2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերը մեկ անգամ ևս ապացուցեցին, որ քաղաքակրթական գործոնի անտեսումը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Այսօր հատկապես ակտիվ են իսլամական, չինական և հինդուիստական քաղաքակրթությունները, որոնք տիրապետում են միջուկային գենքի և արևմտյան քաղաքակրթության գոտիներում ստեղծել են իրենց քաղաքակրթական բազմամիլիոնանոց անկախություն:

Կարող ենք բանավիճել, չընդունել քաղաքակրթական տարրերությունները, սակայն դրանք դրսնորելու են իրենց առանձնահատկությունները և այսուհետև կարևոր գործոն են հանդիսանալու միջազգային հարաբերություններում: Միջազգային քաղաքակրթությունների միջև լարվածությունը այսօր բացահայտ է դրսնորվում: Պակիստանի, Ինդոնեզիայի, Թուրքիայի, Լիբանանի, Սարոկենյի, Չուվեյքի, Ջորջանանի և Սաուդյան Արաբիայի 10 հազար քաղաքացիների շրջանում «Գելլափի»-ի անցկացրած հարցումները ցույց տվեցին, որ նրանց 77 %-ը հավանություն չի տալիս Աֆղանստանի ռմբակոծություններին, 58 %-ը բացասական է Վերաբերվում Բուշին ու նրա քաղաքականությանը (դրական է գնահատում 11 %-ը), իսկ որպես պետություն ԱՄՆ-ին բացասաբար է Վերաբերվում հարցվածների 53%-ը<sup>14</sup>:

Անդրադարձալով քաղաքակրթությունների փոխարարերություններին՝ չի կարելի անտեսել գլոբալացման գործոնը իր նվաճումներով ու հիմնախնդիրներով: Գլոբալացման գործոնով է բացատրվում ազգայնականության ու կրոնական արմատականության աճը, որն էլ իր հերթին

<sup>14</sup> Տե՛ս ՍՏԿԻՆ Ա. Ի. Եдинственная сверхдержава. М., 2003, էջ 374:

սրում է քաղաքակրթական հակասությունները: Անխուսափելի դարձած մոդեռնացումը տարբեր քաղաքակրթություններում ընթանում է տարբեր ձևերով և ընկալվում է ոչ միանշանակ: Արևմտյան քաղաքակրթությունը առավել «շարժուն» է, դիմանմիկ, խրախուսում է նախաձեռնությունը, անհատականությունը: Արևելյան քաղաքակրթությունները առավել պահպանողական են, անհատի շահերը ստորադասվում են հասարակության շահերին: Մոդեռնացումը, որը սկսվել էր Արևմտությի նախաձեռնությունը, առավել արդյունավետ օգտագործվեց Հարավարևելյան Ասիայի երկրներում, որտեղ գլխավոր արժեքներ են համարվում կութափիզմը, կարգապահությունը, իսկ առօրյա կյանքը չի կանոնակարգվում կրոնով, և քաղաքացիական քաղմակարգությունը գորգակցվում է արտադրական ազատականությամբ: Այդ երկրներին հաջողվեց արևմտյան քաղաքակրթության տեխնոլոգիական նվաճումները համատեղել իրենց քաղաքակրթական արժեքների հետ՝ պահպանելով ինքնատիպությունը (ճապոնիա, Մինգապուր, Թայլանդ, Հարավային Կորեա):

Այլ է իրադրությունը իւլամական աշխարհում, որտեղ արդիականացումը հանդիպում է քաղմարիկ խոչընդոտների, որոնք անկայունության մեջացման արդյունք են: Իւլամական արժեքների մեջ էական է աշխարհիկ ու կրոնական կյանքի միասնականությունը, որի դեպքում ազատական գաղափարները, արևմտականացումը չեն ընկալվում միանշանակ: Իհարկե, իւլամական աշխարհի քաղաքական էլիտայի մի մասը ընթանում է արդիականացման անհրաժեշտությունը և որոշ դեպքերում փորձում այն իրականացնել «վերևից», որի արդյունքներին մենք այսօր ականատես ենք (Իրան, Թունիս, Եգիպտոս և այլն): Արևմտյան քաղաքակրթությունը արդեն վարժվել է լիդերության, իր արժեքները նա հիշակել է որպես «համանարդկային ստանդարտ», և որոշակի առումով Արևմուտքի այդ հարստության ու գորիզմի մեջ է քարենված չարիքի աղբյուրը:

Այսպիսով, կարելի է նշել միջքաղաքակրթական հարաբերությունների հետևյալ առանձնահատկությունները.

1) Երկրեւո աշխարհակարգի փլուզումից հետո համաշխարհային ուժային կենտրոնների պայքարը հիմնականում տեղափոխվեց քաղաքակրթական հարթություն: Աշխարհաքաղաքական սուբյեկտների պայքարը ընթանում է ոչ միայն բնական ռեսուրսների, այլև մոլորակի տարբեր տարածաշրջաններում իր քաղաքակրթական, մշակութային արժեքները տարածելու և արմատափորելու ուղղությամբ:

2) Քաղաքակրթությունների միջև հակասությունների խորացումը օրինաչափ գործընթաց է, որը լոկալ քաղաքակրթությունների փոխազդեցության հետևանք է: Քաղաքակրթական տարբերություններն ինքնին հակամարտությունների աղբյուր չեն, և ճիշտ մոտեցումների դեպքում դրանք կարող են վերաճել քաղաքակրթությունների երկխոսության ու համագործակցության:

3) Միջքաղաքակրթական հակասությունների սրումը Արևմուտքի ուժգնացող էքսպանսիայի արդյունք է, որը այլ քաղաքակրթությունների ու ժողովուրդների շրջանում առաջացնում է հակազդեցություն:

4) Վերազգային ու վերաբետական կառույցների ստեղծում ընդիանուր քաղաքակրթական տարածությունում գտնվող պետությունների կողմից:

**ЕРЕМ ВАРДАЗАРЯН – *Цивилизационный фактор в современном мире.*** – В статье рассматриваются факторы, способствующие повышению роли цивилизаций на современном этапе. В последнее время в центре внимания многих специалистов находятся противоречия между различными цивилизациями. В зонах, расположенных вдоль цивилизационных разломов (северо-западная часть Китая, Северный Кавказ, Северная Ирландия, Кипр, Джамму и Кашмир, Индонезия и т. д.), эти противоречия нередко принимают острые формы. Всякая цивилизация реализует свой потенциал через государство, и в некотором смысле история развития человечества есть история развития, противоборства и взаимодействия различных цивилизаций.

Любой цивилизации присущи два основных свойства: с одной стороны, она мобилизует свои силы для самосохранения, а с другой стороны, стремится к экспансии.

Освещая взаимодействие между цивилизациями, необходимо учитывать фактор глобализации, инициированной и поддерживаемой Западом. Принципиально разное восприятие представителями разных цивилизаций современных глобализационных процессов приводит к дисбалансу в темпах модернизации. Во взаимодействии цивилизаций наблюдаются определённые закономерности, проанализированные и обобщённые в конце статьи.

**YEREM VARDAZARYAN – *The Civil Factor in the Contemporary World.*** – The article discusses the factors that contribute to enhancing the role of civilization at the present stage. In recent years one of the aspects of geopolitical conflict, which has a civilizational nature, is in the spotlight of many specialists. Civilization intolerance is especially dangerous in the areas of political deflection or contact (Northwest of China, North Caucasus, North Ireland, Cyprus, Shamu and Kashmir, Indonesia, Malaysia, etc.). It's quite natural that the civilizations should present their potential by means of states, and the history of human development is a history of conflict, cooperation and interaction in separate local civilizations. Any civilization is expressed dually. On the one hand, it mobilizes the forces of self-defense, as well those for maintaining material and cultural values. On the other hand the factor of increase and distribution, which is expressed in different ways, is quite characteristic for civilizations.

Talking about the relations between civilizations, it is impossible to ignore the factor of globalization. Modernization of various civilizations, which has become inevitable, processes in different ways and is conceived non-definitely.

The characteristic features of relations between civilizations are summed up at the end of the given article.